

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
գիտական խորհրդի 22. 09. 2017թ. նիստի**

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 29 (քսանին) անդամից 25-ը (քսանհինգը):

### ՕՐԱԿԱՐԳ

1. **Թարգմանիչ, գրական քննադատ, հրապարակախոս Մարո Մադոյան-Ալաջաջյանին «ԳՊՄԻ-ի Ոսկե մեդալով» պարգևատրելու և թատերագետ Ռազմիկ Մադոյանի անվան լսարանի անվանակոչության մասին**

**Հաղ. գիտքարտուղար՝ Կ. Պետրոսյան**

2. **Հետազոտողի կրթական ծրագրի կազմման նպատակով ընտրովի դասընթացների ցանկի հաստատման մասին**

**Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ա. Ֆարմանյան**

3. **ՇՈՀ-ի մագիստրոսի «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի լրացական դասընթացների կազմակերպման մասին**

**Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Բ. Պողոսյան**

4. **«Ֆիզիկական դաստիարակություն» առարկայից համաինստիտուտային ընտրովի դասընթացի կազմակերպման մասին**

**Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Բ. Պողոսյան**

5. **«Արտակարգ իրավիճակներ և քաղաշտպանության հիմունքներ» լրացական դասընթացի կազմակերպման մասին**

**Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Բ. Պողոսյան**

**6. «Հայոց պատմություն», «Հայոց լեզու և գրականություն» առարկաների արտալսարանային պարապմունքների կազմակերպման մասին**

**Հաղ.**՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

**7. Ընթացիկ հարցեր**

**7.1 2017-2018 ուստարում հետազոտողի կրթական ծրագրի «Հայոց լեզու» մասնագիտությամբ ընդունված ասպիրանտ Աննա Արտուշի Վարդանյանի գիտական ղեկավարի և թեմայի հաստատման մասին**

**Հաղ.**՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

**1.ԼՍԵՑԻՆ՝**

**Թարգմանիչ, գրական քննադատ, հրապարակախոս Մարո Մադոյան- Ալաջաջյանին «ԳՊՄԻ-ի Ոսկե մեդալով» պարգևատրելու և թատերագետ Ռազմիկ Մադոյանի անվան լսարանի անվանակոչության մասին Հաղ.**՝ գիտքարտուղար՝ **Կ. Պետրոսյան**

Գիտխորհրդի նիստին հյուրի կարգավիճակով ներկա էին Մարո Մադոյան-Ալաջաջյանը, Ռազմիկ Մադոյանի հարազատները, ընկերները, «Շիրակ հայրենակցական միության» նախագահը, անդամներ:

Գիտքարտուղար Կ. Պետրոսյանը հակիրճ ներկայացրեց Մարո Մադոյան-Ալաջաջյանի և Ռազմիկ Մադոյանի կենսագրականներն ու աշխատանքային ուղիները, նրանց ծավալած գործունեություններն անցյալում և ներկա ժամանակաշրջանում, այնուհետև նշեց, որ նախորդ գիտխորհրդում(7.09.2017թ.) էլեկտրոնային փոստի միջոցով գիտխորհրդի անդամների կողմից միաձայն ընդունվել է Մարո Մադոյան-Ալաջաջյանին «ԳՊՄԻ-ի Ոսկե մեդալով» պարգևատրելու և թատերագետ Ռազմիկ Մադոյանի անվան լսարանի անվանակոչության մասին հարցերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

ՇՊՀ-ի ռեկտոր Ս. Մինասյանը, Ֆ. մ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր Ս. Սարգսյանը, Մադոյանների հարազատները, ապա ձայնը տրվեց Ս. Մադոյանին, որն իր երախտիքի խոսքը հղեց գիտիտրիդին, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ռեկտորին՝ իր և իր հայրիկի՝ Ռազմիկ Մադոյանի ավանդը բարձր գնահատելու, պատվի արժանացնելու կապակցությամբ:

Ոսկե մեդալի հանձման արարողությունից հետո հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետում կատարվեց նաև Ռազմիկ Մադոյանի անվան լսարանի բացումը:

## **2.ԼՍԵՑԻՆ՝**

### **Հետազոտողի կրթական ծրագրի կազմման նպատակով ընտրովի դասընթացների ցանկի հաստատման մասին**

**Հաղ.**՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Պրոռեկտոր Ֆարմանյանը ներկայացրեց, որ ՀՀ ԿԳՆ 21.07.2010թ. «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության 3-րդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» N1167 հրամանի համաձայն՝ Շիրակի պետական համալսարանի հետազոտողի կրթական աստիճանում ուսումնառությունը կազմակերպվում է կրեդիտային համակարգով: Ասպիրանտուրայի և հայցորդության կրթական ծրագրերը բաղկացած են 2 փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական: Ծրագրի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտի:

ՀՀ ԿԳՆ 13.04.2017թ. N371 հրամանի համաձայն՝ վերոնշյալ հրամանում կատարվել են հետևյալ փոփոխությունները. ծրագրի 50 կրեդիտը նախատեսվում է կրթական բաղադրիչին, 130-ը՝ հետազոտական աշխատանքին:

Կրթական բաղադրիչը կազմված է պարտադիր և ընտրովի դասընթացներից: Պարտադիր դասընթացների ցանկը ներկայացված է վերոնշյալ հրամանում, իսկ ընտրովի դասընթացների ընտրությունը կատարվում է համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված դասընթացների ցանկից:

Գիտխորհրդի կողմից հաստատման նպատակով ներկայացվում է ընտրովի դասընթացների ցանկը, որտեղ յուրաքանչյուր դասընթացին հատկացվում է 4 կրեդիտ և 24 լսարանային ժամ.

1. Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն
2. Մանկավարժություն
3. Հոգեբանություն
4. Գիտական էթիկա
5. Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով
6. Գործարար գրագրություն և հաղորդակցման կարողություններ
7. Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում
8. Նախագծերի մշակում և կառավարում
9. Հետազոտական աշխատանքների կազմակերպում
10. Կարիերայի կառավարում և աշխատանքի որոնման մեթոդներ
11. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում և ղեկավարում
12. Ինտելեկտուալ սեփականության իրավունք և պատենագիտություն

### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել հետազոտողի կրթական ծրագրի կազմման նպատակով ընտրովի դասընթացների ցանկը:

### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Յ.ԼՄԵՑԻՆ՝**

**ՇՊՀ-ի մագիստրոսի «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի լրացական դասընթացների կազմակերպման մասին**

**Հաղ.**՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

Պրոռեկտոր Բ. Պողոսյանը ներկայացրեց, որ 2017-2018 ուստարում իրավագիտության մագիստրոսի (դասիչ՝ 042101.01.7) կրթական ծրագրով առաջին կուրսում սովորող 24 ուսանողներից 12-ը բազային «Իրավագիտություն» ( դասիչ՝

042101.01.6) կրթությունն չունի, սակայն այս բնագավառում 4-5 տարվա աշխատանքային փորձ ունի:

Պրոռեկտոր Բ. Պողոսյանն առաջարկեց առաջին կիսամյակում «Իրավագիտություն» մագիստրոսի կրթական ծրագրով կազմակերպել լրացական դասընթացներ «Քրեական իրավունք», «քաղաքացիական իրավունք» և «Սահմանադրական իրավունք» առարկաներից՝ յուրաքանչյուրը 64 ժամ ծանրաբեռնվածությամբ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Թույլատրել առաջին կիսամյակում «Իրավագիտություն» մագիստրոսի կրթական ծրագրով կազմակերպել լրացական դասընթացներ «Քրեական իրավունք», «քաղաքացիական իրավունք» և «Սահմանադրական իրավունք» առարկաներից՝ յուրաքանչյուրը 64 ժամ ծանրաբեռնվածությամբ:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**4.ԼՍԵՑԻՆ՝**

**«Ֆիզիկական դաստիարակություն» առարկայից համաինստիտուտային ընտրովի դասընթացի կազմակերպման մասին**

**Հաղ.՝** ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Բ. Պողոսյան

Պրոռեկտոր Բ. Պողոսյանը ներկայացրեց, որ 2017-2018 ուստարում ուսումնական պլաններում «Ֆիզիկական դաստիարակություն» առարկային կրեդիտ չի տրված, բայց համալսարանի տարբեր ֆակուլտետներում սովորող ուսանողների ցանկությամբ և «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկայի» ամբիոնի կազմակերպմամբ ընտրվել են սպորտային մարզաձևերից թվով 5 ձև ( վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, թենիս, լող), ձևավորվում են խմբերը և ըստ կազմված գրաֆիկի հոկտեմբերի 1-ից առաջին և երկրորդ կուրսերում պարտադիր, մյուս կուրսերում ըստ ցանկության կազմակերպվելու է համաինստիտուտային ընտրովի դասընթաց:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Ս/թ-ի հոկտեմբերի 1-ից առաջին և երկրորդ կուրսերում պարտադիր, մյուս կուրսերում ըստ ցանկության կազմակերպվել համաինստիտուտային ընտրովի դասընթաց «Ֆիզիկական դաստիարակություն» առարկայից:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

#### **5.ԼՍԵՑԻՆ՝**

**«Արտակարգ իրավիճակներ և քաղաքաշտպանության հիմունքներ» լրացական դասընթացի կազմակերպման մասին**

**Հաղ.՝** ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

Պրոռեկտոր Պաղոսյանը ներկայացրեց, որ դուրս գալով մեր մարզի սեյսմիկ իրավիճակից և ժամանակակից այլ հիմնադղիրներից համալսարանում առաջարկվում է կազմակերպել լրացական դասընթացներ «Արտակարգ իրավիճակներ և քաղաքաշտպանության հիմունքներ» առարկայից:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Ս/թ-ի հոկտեմբերի 1-ից կազմակերպել լրացական դասընթացներ «Արտակարգ իրավիճակներ և քաղաքաշտպանության հիմունքներ» առարկայից:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

#### **6. ԼՍԵՑԻՆ՝**

**«Հայոց պատմություն», «Հայոց լեզու և գրականություն» առարկաների արտալսարանային պարապմունքների կազմակերպման մասին**

**Հաղ.՝** ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

Պրոռեկտոր Պաղոսյանը ներկայացրեց, որ առաջարկվում է համալսարանում կազմակերպել արտալսարանային պարապմունքներ «Հայոց պատմություն», «Հայոց լեզու և գրականություն» առարկաներից (16 ժամ ժամաքանակով):

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Ս/թ-ի հոկտեմբերի 1-ից կազմակերպել արտալսարանային պարապմունքներ Հայոց պատմություն», «Հայոց լեզու և գրականություն» առարկաներից (16 ժամ ժամաքանակով):

## **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## **7.1. ԼՍԵՑԻՆ՝**

**7.1 2017-2018 ուստարում հետազոտողի կրթական ծրագրի «Հայոց լեզու» մասնագիտությամբ ընդունված ասպիրանտ Աննա Արտուշի Վարդանյանի գիտական ղեկավարի և թեմայի հաստատման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Հայոց լեզվի և գրականությանամբիոնի ասպիրանտ Աննա Արտուշի Վարդանյանի գիտական ղեկավարի և թեմայի հաստատման հարցը:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաստատել՝ «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասպիրանտ Աննա Արտուշի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Բայական հիմքերի բառակազմական արժեքը գրաբարում» թեման ((Ժ.02.01) - «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ):

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Սերգո Արտուշի Հայրապետյանին:

## **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: